ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 հունվարի 2014 թվականի N 6-Ա

ք. Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 1211-Ա որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. Համահայկական ձմեռային առաջին խաղերի կամակերպմանը և անցկացմանը աջակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) *Արթուր Հարությունյան* - աշխատանքային խմբի ղեկավար, Համահայկական ձմեռային առաջին խաղերի կազմկոմիտեի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքային համայնքի ղեկավար (համաձայնությամբ),

2) *Գայանե Մարտիրոսյան* - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

3) *Սերյոժա Սաֆարյան* - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ,

4) *Գեղամ Գրիգորյան* - աշխատանքային խմբի անդամ - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ),

5) *Հրաչ Ներսիսյան* - աշխատանքային խմբի անդամ - <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի <<Հրազդան>> տեղամասի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),

6) *Վարդան Հովհաննիսյան* - աշխատանքային խմբի անդամ - <<ՀայՌուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության <<Կոտայքի գազաֆիկացման և գազամատակարարման>> մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),

7) *Հայկ Անինյան* - աշխատանքային խմբի անդամ - <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության <<Հյուսիս-Արևմտյան>> մասնաճյուղի <<Հրազդան>> տեղամասի ծառայության պետ (համաձայնությամբ):

2. Աշխատանքային խմբին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին պարբերաբար ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ